

# ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԿ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

*Հետազոտության թեման՝ Խոսքային*

*հաղորդակցում*

*Առարկան՝ Անգլերեն*

*Հետազոտող ուսուցիչ՝ Վարդուհի Երանոսյան*

*Ուսումնական հաստատություն՝ Անտոն Չեխովի  
անվ հ.55 դպրոց*

**Երևան 2022**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----3**

*1.Լեզուն՝ որպես նշանային համակարգ ու հաղորդակցության հենք,  
Լեզվահաղորդակցական ռանձնահատկությունները պայմանավորող գործոնները---*

**-----4**

*2. Սովորողի մոտ խոսքային հաղորդակցության ուսուցման  
առանձնահատկությունները-----*

**-----9**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ-----16**

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----17**

## ՆԵՐՎՃՈՒԹՅՈՒՆ

*Հետազոտական թեմայի արդիականությունը.* Հաղորդակցական փոխազդեցության մեջ խոսքն օգտագործվում է որպես հաղորդակցման մեխանիզմ, որը ներկայացված է լեզվական համակարգերով և լինում է գրավոր և բանավոր: Բանավոր հաղորդակցությունը փոխադարձ հաղորդակցական գործողություն է, որը տեղի է ունենում մեկ կամ մի քանի սուբյեկտների միջև, ներառում է տարբեր բովանդակության տեղեկատվության փոխանցում և ընդունում: Բանավոր հաղորդակցության ամենակարեւոր պահանջը արտասանության հստակությունն է, բովանդակության հստակությունը, մտքի մատուցման մատչելիությունը:

Բանավոր հաղորդակցությունը կարող է առաջացնել դրական կամ բացասական հուզական արձագանք: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր անհատ պարզապես պետք է իմանա և ճիշտ կիրառի խոսքի փոխազդեցության կանոնները, նորմերը և տեխնիկան: Հաղորդակցության արդյունավետությամբ է պայմանավորված կյանքում հաջողության հասնելու գրավականը, ուստի ցանկացած մարդ պետք է տիրապետի հոետորական արվեստի նրբություններին: Սրանով էլ պայմանավորված է թեմայի կարևորությունն ու արդիականությունը:

Աշխատանքի *նպատակն է* ուսումնասիրել խոսքային հաղորդակցման էությունը, առանձնահատկությունները:

Աշխատանքի խնդիրներն են.

- Ուսումնասիրել լեզվի գործառույթները,
- Ներկայացնել լեզուն որպես մտածողության ու ինքնարտահայտման հենք,
- Քննել հաղորդակցային հմտությունների զարգացման առանձնահատկությունները դասապրոցեսի ընթացքում:

***1.Լեզուն՝ որպես նշանային համակարգ ու հաղորդակցության հենք, Լեզվահաղորդակցական ռանձնահատկությունները պայմանավորող գործոնները.***

Ինչպես գիտեք, մարդը սոցիալական էակ է և առանց հասարակության, ասել է թե՛ առանց հաղորդակցության երբեք չի կարող լիարժեք լինել: Սուբյեկտների փոխազդեցությունը հասարակության հետ տեղի է ունենում հաղորդակցման գործիքների (հաղորդակցության) միջոցով, որոնք կարող են լինել բանավոր և ոչ բանավոր:

Բանավոր և գրավոր հաղորդակցման միջոցներն ապահովում են մարդկանց հաղորդակցական փոխազդեցությունը ամբողջ աշխարհում: Թեև մարդն ունի առաջնային միտք, բայց դրա արտահայտման և այլ անհատների կողմից հասկանալու համար անհրաժեշտ է հաղորդակցության այնպիսի գործիք, ինչպիսին խոսքն է, որը մտքերը բացահայտում է բառերի միջոցով: Իսկապես, անհատի համար երևույթը կամ հասկացությունը սկսում է գոյություն ունենալ միայն այն դեպքում, երբ այն ստանում է սահմանում կամ անվանում:

Գաղտնիք չէ, որ լեզուն ամենամեծ նշանային համակարգն է: Բառերի օգնությամբ մարդը պարզորոշում է իրադարձությունների ու երևույթների իմաստը, արտահայտում սեփական մտքերը, զգացմունքները, դիրքորոշումներն ու աշխարհայացքը: Անհատականությունը, նրա լեզուն և գիտակցությունը անբաժանելի են:

Լեզուն յուրաքանչյուր էթնոսի կարևորագույն հոգեբանական և մշակութային առանձնահատկությունն է և սերտորեն կապված է նրա հոգեկերտվածքի այնպիսի «բաղադրիչների» հետ, ինչպիսիք են մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական ընդունակություններն ու գործընթացները, աշխարհընկալումը և այլն: Երբ մենք հանդիպում ենք որևէ անձանոթ անհատի, ապա առաջին հատկանիշներից մեկը, որը թույլ է տալիս նրան որոշակի էթնիկական պատկանելիություն վերագրել, այն լեզուն է, որով նա խոսում է՝ իր մայրենին համարելով: Մայրենի լեզվի բավարար իմացությունը մարդու էթնիկական պատկանելիության և յուրահատկության, այսինքն՝ նրա էթնիկական ինքնության հիմնական կողմերից մեկն է:

Գիտության մեջ բազմաթիվ են տեսությունները, ըստ որոնց լեզուն ինքնին մտածողությունն է: Ընդունված է ասել, որ մարդը մտածում է լեզվով: Թվում է, թե մտածելն ու խոսելը, մտածողությունն ու լեզուն առանձին գոյություն ունեցող

երևույթներ են, և ցանկացած պահի հնարավոր է դրանք տարանջատել: Սակայն դա այդպես չէ. մտածողությունն ու լեզուն հանդես են գալիս համատեղ, և գործնականում ու բնականորեն անհնար է զատորոշել, թե ինչ է լեզուն որպես առանձին երևույթ, և ինչ է մտածողությունը որպես մեկ այլ երևույթ: Կարելի է տեսական-փիլիսոփայական ձևակերպումներ տալ և՛ մտածողությանը, և՛ լեզվին առանձին-առանձին, բայց ակնհայտ է, որ յուրաքանչյուր այդպիսի ձևակերպման հեղինակն ինքը անպայմանորեն պատկանում է որևէ որոշակի լեզվաշխարհի և խոսում է որևէ որոշակի լեզվով: Կարելի է, կոնկրետ լեզվի մասին խոսելով, դատողություններ անել կոնկրետ մտածողության մասին: Ինչո՞ւ մարդիկ չեն հասկանում միմյանց. որովհետև, ինչպես ասում են, «մենք տարբեր լեզուներով ենք խոսում»: Հաղորդակցման անփոխարինելի պայմանը ոչ միայն ընդհանուր լեզվի իմացությունն է, այլև մինչ այդ կուտակված որոշակի գիտելիքների առկայությունը: Հաղորդակցության համար անհրաժեշտ է, որ մասնակիցները ունենան սոցիալական պատմության որոշակի ընդհանրություն, որն արտացոլվում է շրջակա միջավայրի մասին ունեցած գիտելիքներում: Այն գիտելիքը, որն առկա է հաղորդակցական ակտի մասնակիցների մտքում, կոչվում է ֆոն: Ըստ Օ.Ս. Ախմանովայի սահմանման՝ ֆոնային գիտելիքը «խոսողի և լսողի՝ իրականության փոխադարձ իմացությունն է, որը լեզվական հաղորդակցության հիմքն է»<sup>1</sup>: Ֆոնային գիտելիքները, որոնք միավորում են այս կամ այն տարածաշրջանի անդամներին, մեծապես պայմանավորում են նաև վերջիններիս լեզվական առանձնահատկությունները:

Ըստ Հումբոլդտի՝ լեզուն ժողովրդի էներգիան է, որ բխում է նրա խորքերից, այն մարդկային հոգու կենդանի գործունեությունն է, «լեզուն ժողովրդի հոգին է, իսկ ժողովրդի հոգին հենց նրա լեզուն է»<sup>2</sup>: Բացի այդ՝ լեզուների կառուցվածքների տարբերությունները և մարդկության հոգևոր զարգացման վրա դրանց ազդեցությունները քննելիս Վ. Հումբոլդտը զարգացնում է այն գաղափարը, որ «յուրաքանչյուր լեզու, նշելով երևույթները և արտաքին աշխարհի առարկաները, իրենով խոսող ժողովրդի համար ձևավորում է աշխարհի սեփական պատկերը», «այդ պատճառով էլ տարբեր լեզուներ տարբեր աշխարհընկալումներ են»<sup>3</sup> : Նա նույն գաղափարը այլ բանաձևմամբ էլ է կրկնում. «...Մարդկային ցեղի լեզուների կառուցվածքը տարբեր է, որովհետև տարբեր են ժողովուրդների հոգևոր

<sup>1</sup> Ахманова О.С., Словарь лингвистических терминов, М., 1969, с 498.

<sup>2</sup> Гумбольдт В. О влиянии различного характера языков на литературу и духовное развитие. Избранные труды по языкознанию. М., 1984, с 324-326.

<sup>3</sup> Նույնի:

առանձնահատկությունները»<sup>4</sup>: Իսկ «սահմանագատող պահն այստեղ այն է, որ մի ժողովուրդ լեզվի մեջ ներդնում է ավելի օբյեկտիվ իրողություններ, իսկ մյուսը՝ ավելի սուբյեկտիվ տարրեր»: Թեև Հումբոլդտը զարգացնում է այն գաղափարը, որ տարբեր լեզուներով ձևավորվող մտքերը չեն կարող լիովին նույնը լինել (որովհետև լեզուները միշտ իրենց հատուկ ձևերի միջոցով են դրսևորվում), սակայն նա այն տեսակետին չէ, թե տարբեր լեզուներով խոսող մարդիկ չեն կարող հասկանալ միմյանց ընդհանրապես. թարգմանել միշտ էլ հնարավոր է, բայց ինչպես կոնկրետ ազգային լեզվի մեջ անհատի լեզվական առանձնահատկություններն են «վերանում», այնպես էլ ազգային լեզուների առանձնահատկություններն են «վերանում մարդկության սուբյեկտիվությամբ»:  
Ինչպես Տերյանն է մեկնաբանում՝

Մեզ չի հասկանա օտարերկրացին,

Մեզ չի հասկանա սառն օտարուհին<sup>5</sup> :

Այսինքն օտար խոսքը լիովին հասկանալու ընկալելու համար պետք է մտածողության, համատեղ կյանքի ու սովորույթների որոշակի փորձ:

Փոնային գիտելիքի մի տեսակ էլ տեղեկատվությունն է, որն ունեն որոշակի էթնիկ և լեզվական հանրության բոլոր անդամները և որոնք կապված են ազգային մշակույթի իմացության հետ: Նման ֆոնային գիտելիքները, որ արտահայտվում են լեզվական հաղորդակցական համակարգում և բացակայում են օտարերկրացիներից, կոչվում են տարածաշրջանային գիտելիքներ և հանդիսանում են ներէթնիկ կարծրատիպերի ձևավորման հիմքերից<sup>6</sup>:

Տարածաշրջանի մասին ֆոնային գիտելիքները ներառում են տվյալ հասարակության մեջ ընդունված աշխարհայացքի նորմերը, էթնիկ գնահատականները, գեղագիտական ճաշակները, լեզվական և ոչ լեզվական վարքագծի նորմերը և այլն:

Տարածաշրջանի մասին գիտելիքները շատ կարևոր են մշակույթի ազգային կարծրատիպերի «վերձանման» և մեկնաբանման, դրանց ըմբռնման և ճիշտ մեկնաբանման համար: Ի վերջո, ժողովրդի կյանքի բազմաթիվ ասպեկտներ, կենցաղային ավանդույթներ, սովորույթներ, պատմական իրադարձություններ, որոնք

<sup>4</sup> Նույնի, էջ 85-105:

<sup>5</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, Եր., 1972, էջ 240:

<sup>6</sup> Томахин Г.Д., Фоновые знания как основной предмет лингвострановедения // ИЯШ. 1980, № 4, с 45.

հայտնի են տվյալ լեզվական հասարակության անդամներին և անհայտ օտարերկրացիներին, հանգեցրել են տվյալ մշակութային տարածքում որոշակի կարծրատիպերի առաջացմանը: Ուստի ցանկացած օտար լեզու պետք է ուսումնասիրվի տվյալ երկրի պատմության և մշակույթի հենքի վրա, քանի որ շատ լեզվական միավորներ արտացոլում են որոշակի ժողովրդի սպրեյակերպի ազգային ինքնությունը, պատմական փաստերը, բնական և աշխարհագրական առանձնահատկությունները, մշակույթը: Լեզվական և մշակութային առումով ներկայացված լեզվական միավորները կարող են պարունակել մեծ քանակությամբ ֆոնային գիտելիքներ, այսինքն՝ պատմամշակութային տեղեկատվություն, որն անհրաժեշտ է լեզվի ճիշտ և արդյունավետ ուսուցման համար<sup>7</sup>:

Մտածողության տարբերությունները, ինչի արդյունքում էլ որ ձևավորված լինեն (ժողովրդի պատմական ճակատագիր, սպրած աշխարհագրական միջավայր, հարևաններ և այլն) անպայման իրենց ազդեցությունն են գտնում, ասել է թե համապատասխան լեզվական նշանն են ստանում խոսքային հաղորդակցության մեջ:

Նախապատմական գիտելիքները հատուկ դեր են խաղում օտար մշակութային տեքստը հասկանալու համար: Տեքստն այս դեպքում լեզվաբանության և լեզվամշակութաբանության իսկական հանգույց է, քանի որ պատկանում է մշակույթին և նրա ամենաբարձր աստիճանն է, միևնույն ժամանակ տեքստը մշակույթի գոյության ու արտահայտման ձև է:

Որպես օրինակ բերենք Միքայել անվան ընկալումը գերմանական մշակույթում: Միջնադարում գերմանական մշակույթում «Միշել» անունը շատ տարածված էր և դարձավ հայտնի անձնանուն: «Der deutsche Michel» արտահայտությունն առաջին անգամ հանդիպում է 1541 թվականին, և դրա իմաստը փոխվել է դարերի ընթացքում: Անունը ծագում է Միքայել հրեշտակապետի անունից, որը համարվում էր գերմանացիների հովանավոր սուրբ և 17-րդ դարում այն դեռ դրական նշանակություն ուներ: 18-րդ դարում «der deutsche Michel» արտահայտությունը օգտագործվում էր *փարթամ* իմաստով, իսկ դարավերջում կիրառվում էր *ներքնակ, քնոց* իմաստներով:

Գերմանիայում ազատագրական պատերազմների հեղափոխության միջև ընկած ժամանակահատվածում «deutscher Michel» արտահայտությունը դարձավ *ազգայնական գաղափարներով խիստ սահմանափակ գերմանացու* հոմանիշը, որը նաև

---

<sup>7</sup> Նույնի, էջ 46:

կրում էր ազգային հետամնացության և գավառականության բնորոշ գծերը: Քաղաքական առումով «գերմանացի Միշել» արտահայտությունը տարիների ընթացքում դառնում է շովինիզմը և հետամնացությունը արտահայտող լեզվական միավոր:

Ժամանակակից գերմաներենում.

\* Michel, der (kurz von Michael) կրում է 1) բաց. հիմար, պարզամիտ 2) գերման իմաստը, իսկ \*der deutsche Michel-ը գերմանացի վաճառականի հեզնական մականուն է:

Հետևաբար արտահայտության պատմության չիմացությամբ օգտագործումը կարող է հանգեցնել իմաստի թյուրըմբռնման և տարատեսակ մեկնաբանությունների տեղիք տալ:

Այսպիսով, յուրաքանչյուր մշակույթ իր զարգացման ընթացքում ստեղծում է տարբեր նշանային համակարգեր, որոնք բնորոշ են այդ մշակույթը, արժեհամակարգը կրողներին: Նշանների ստեղծումը գուտ մարդկային առանձնահատկություն է: Կենդանիների մոտ գոյություն ունեցող նշանները և ձայնային ազդանշանները առաջացել են ականա՝ զարգանալով տեսակի էվոլուցիայի ընթացքում, և փոխանցվում են գենետիկորեն: Միայն մարդն է գիտակցաբար ստեղծում իր նշանները, որոնք ներկայացնում են մարդկային մշակութային կեցության ձևը<sup>8</sup>: Նշաններն իրենք իրենց որևէ իմաստ չեն կրում և որևէ արժեք չեն ներկայացնում, եթե փոխկապակցված չեն այլ նշանների հետ և չեն մտնում որոշակի նշանային համակարգի մեջ: Մարդկության պատմության մեծ գոյություն ունեցած ամենամեծ նշանային համակարգը լեզուն է՝ որպես հաղորդակցության հիմնական միջոց: Մարդկային հասարակությունում այս կամ այն ժամանակ գոյություն ունեցող բազմազան նշաններն ու նշանային համակարգերը այս կամ այն հասարակության մասն են կազմում: Մակայն մարդկային այդ ունակությունը ինդիքներ է առաջացնում օտար մշակույթներն ընկալելու և հասկանալու մեջ:

Օտար մշակույթները ընկալում ենք մեր սեփական մշակույթի պրիզմայի տեսանկյունից, ուստի մեր եզրահանգումները, ուսումնասիրությունները սահմանափակված են մեր մշակույթի ու վերջինիս բերած կարծրատիպերի շրջանակներով: Ուստի միջմշակութային, միջէթնիկ հաղորդակցության հաջողության

---

<sup>8</sup> Tylor E.B Anthropology. Ann Arbor: The University of Michigan Press, 1960, p. 28.



գրավականը ոչ միայն լեզվի նպակադրված սովորելու գործընթացն է, այլ նաև վերջինիս մշակույթի մասին ֆոնային գիտելիքի ձեռքբերումը<sup>9</sup>:

Արժեհամակարգը և լեզվամտածողական կառույցը մշտապես ազդում են տվյալ լեզվով ստեղծվող տեքստի (բանահյուսական, բանասիրական, գրական, գրականագիտական, պատմագրական, պատմագիտական և այլն) վրա՝ պայմանավորելով այդ տեքստի յուրահատկությունները: Լեզվի կառուցվածքային «ամրանները» պահում են տեքստը՝ այդ լեզվով խոսող հանրության արժեհամակարգային տարրեր պարունակելով, իսկ վերջիններս հետադարձ ուժով ազդում են լեզվի, դրա բառապաշարի և մինչև իսկ կառուցվածքի վրա: Ասվածն հատկապես վերաբերում է խոսքային այնպիսի կայուն կառույցներին, ինչպիսիք են դարձվածքներն ու շրջասույթները:

Խոսքի միջոցով աշակերտը զգայական ճանաչողության սահմանափակ հնարավորությունից անցում է կատարում տրամաբանական մտածողությանը: Ինչպես նկատում է Ի. Սեչենովը, որքան վերացական խոսքը հեռանում է իր զգայական հիմքից, այնքան վերածվում է ոչ զգայական ազդարարի: Ասենք, ծաղկի վերաբերյալ մեզ տեղեկություններ են տալիս տեսողական, հոտառական, շոշափելիքի զգայարանները, մինչդեռ «ծաղիկ» ընդհանուր հասկացությունը վեր է այդ ամենից: Այն ընդհանրացնում է մի շարք էական հատկություններ և հենց դրանով էլ ճանաչողական ավելի մեծ դեր է կատարում: Վերացարկման շնորհիվ աշակերտները ճանաչում են նաև իրերի ու առարկաների թաքնված հատկությունները, հարաբերությունները, բացահայտում պատճառահետևանքային կապերը և այլն: Պետք է ասել, որ չնայած երեխան ազատ խոսել սկսում է իր կյանքի երկրորդ տարում, սակայն դրանից շատ առաջ տարբերում է ձայնի տոնը՝ մեղմությունը, խստությունը, քնքշությունը, նրբությունը և հասկանում է բառերի իմաստը: Մանկան թոթովախոս բառերի մեջ արդեն կան վերացարկման և ընդհանրացման տարրեր: Հաճախ արտասանած իր մի բառով նա ավելին է ցանկանում ասել, քան մենք կարծում ենք: Նրա արտասանած առաջին բառերը, ինչ խոսք, դեռևս չունեն կայուն, հստակ բառային իմաստ: Շատ դեպքերում երեխան միևնույն բառով կոչում է մի շարք առարկաներ: Բայց այդ շրջանում նրա արտասանած բառերը միաժամանակ նախադասություններ են և ունեն խոսքի նշանակություն:

---

<sup>9</sup> Грушевицкая Т. Г., Попков В. Д., Садохин А. П. Основы межкультурной коммуникации, М., 2003, с. 231.

Դպրոցական ուսուցումը երեխայի առջև մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման նոր հնարավորություն է ստեղծում: Անցնելով լեզվի կանոնավոր ու համակարգված ուսուցում՝ աշակերտները զարգացնում են իրենց գրավոր ու բանավոր խոսքը, որը մեծապես նպաստում է նրանց տրամաբանական մտածողության զարգացմանը: Ուսուցումն սկսելով տարրերից, հնչյուններից ու տառերից՝ երեխաներն աստիճանաբար անցնում են գրավոր խոսքի ու ընթերցանության տեխնիկայի տիրապետմանը:

Դպրոցում լեզուն, մի կողմից, ուսուցանվում է որպես հատուկ առարկա՝ նպատակ ունենալով զարգացնել աշակերտների գրավոր ու բանավոր խոսքը, մյուս կողմից, նպաստում է այլ առարկաների ուսուցմանը: Գործնական նշանակությունից լեզուն աստիճանաբար անցնում է ավելի բարդ գործառույթի և, առհասարակ, հանդես է գալիս որպես տրամաբանության զարգացման միջոց:

## ***2. Սովորողի մոտ խոսքային հաղորդակցության ուսուցման առանձնահատկությունները***

Լեզվի ուսուցման գործնական պարապմունքներում բանավոր խոսքի դասավանդումը միշտ ուղեկցվում է տեքստային նյութի հետ նախնական աշխատանքով, ընթերցանությամբ, թարգմանությամբ, տեղեկատվության վերլուծությամբ և դրա բովանդակության փոխանցմամբ: Ավանդական տեքստի ընթերցումը որպես ընթերցանության ըմբռնման վերահսկման ձև հաճախ կատարվում է ուսանողների կողմից՝ վերապատմելու կամ բանավոր թարգմանության տեսքով: Մինչեռ վերևում քննարկված լեզվի ստրուկտուրալ առանձնահատկությունները հիմնավորում են, որ տեքստը (հատկապես օտարալեզու) հիմնովին հասկանալու համար սովորողը պետք է ունենա ֆոնային գիտելիք, ինչի վրա նոր կառուցի բառապաշարի, ուղղագրության ու ուղղախոսության նոր ձևավորվող գիտելիքը: Գիտելիք ձևավորելու համար կարելի է կիրառել շրջված դասարանի մեթոդն ու նախորդ դասին արդեն իսկ հանձնարարել որևէ ֆիլմ, երգ, մուլտֆիլմ, որում օգտագործվում են տվյալ օրվա դասանյութի քարացած լեզվական միավորները, կամ բանահյուսական նյութը: Սա, բացի այն, որ կնպաստի դասարանում դասանյութի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, նաև հնարավորություն կընձեռի տալ աշակերտին որոշակի սկզբնական գիտելիք բանահյուսական նյութի և/կամ տեքստում առկա դարձվածքների ու շրջասույթների մասին, եթե այդպիսիք կան:

Ուստի անհրաժեշտ է նախ տարբերակել տեքստերի հետ աշխատանքի տեսակները և բացատրել դրանց նպատակի և բովանդակության տարբերությունը:

Տեքստի թարգմանությունը հետ բառարանային աշխատանքը, լինի այն մայրենի լեզվով, թե օտար, նպատակ ունի 100% տեղեկատվության վերհանմանը և բովանդակային բոլոր փաստերի, իրադարձությունների և մանրամասների շարադրման: Տեքստն ամփոփելիս ուշադրություն է դարձվում ամբողջ տեղեկատվության մշակմանը, կառուցվածքային խիստ հաջորդականության պահպանմամբ: Տեքստի հետ նման աշխատանքը գերծ է պահում պարզապես դուր եկած փաստերի պարզ վերարտադրումից կամ ներկայացումից: Ուսուցման գործընթացում որոշակի ժամանակ կպահանջվի այնպիսի հմտություններ զարգացնելու համար, ինչպիսիք են «անձանոթ բառերի իմաստը համատեքստից

գուշակելը, առանձնացնելով հիմնական թեման և գաղափարները (կարևոր փաստեր)»<sup>10</sup> և այլն:

Նախքան տեքստի ամփոփման տարբեր վարժություններ կատարելը, անհրաժեշտ է տալ տեքստի ընդհանուր նկարագրությունը, որը «գրավոր կամ բանավոր զեկույցի տեսքով տեքստի բովանդակության ներկայացումն է. բարձրացված բոլոր հարցերի հիմնական բովանդակության բացահայտումը՝ ուղեկցվող գնահատմամբ և եզրակացություններով»<sup>11</sup>: Հաղորդակցական հմտությունների կատարելագործման համար անհրաժեշտ է անընդհատ քննարկման հարցեր ուղղել սովորողին, նպաստել նրան, որ նա խոսի, դասընկերների հետ քննարկումների մեջ մտնի:

«Նախադասության երկրորդական անդամների դերը. լրացում» թեմայի ուսուցման կարելի է առաջադրել հետևյալ խնդրահարույց հարցը՝ արդյոք նախադասության երկրորդական անդամներն այդքան անհրաժեշտ են իրական կյանքում: Պատասխանելու ընթացքում սովորողները տարբեր օրինակներ են բերում սեփական փորձից, մայրենի լեզվից՝ ապացուցելով խոսքում այդ շարահյուսական միավորների անհրաժեշտությունը կամ անպետքությունը: Պարզեցնելով գիտական նյութը, ընտրելով հաղորդակցման տարբեր իրավիճակներ, ուսուցիչը տարբեր բնավորության ու անգամ էթնիկ ու մշակութային պատկանելության աշակերտների մոտ նախաձեռնում է ուսումնական գործընթացում երկխոսության դիմելու հմտություններ:

Առհասարակ, դասը պետք է վարել երկու փուլով, որոնցից առաջինը կներառի ճիշտ խոսքն ու բառերի քերականական կազմը, երկրորդ մասը կկենտրոնանա իմացական ու վերլուծական կարողությունների վրա: Իհարկ, կարող է լինել նաև հակառակը, բայց փուլային բաժանումն անհրաժեշտ է: Այստեղ առաջնային ու կարևոր է այն հանգամանքը, որ աշակերտը ոչ թե պիտի լինի դիտողի դերում, այլ անմիջականորեն գործընթացի մասնակիցը: Ուսուցիչը պետք է հնարավորություն տա աշակերտներն իրենք հարցեր ուղղեն միմյանց, վերլուծեն ու պատասխանեն, ինքնուրույնաբար հանգեն եզրակացությունների, արտահայտեն իրենց կարծիքը, մի խոսքով ակտիվորեն մասնակցեն իրենց գիտելիքների ձեռքբերմանը:

<sup>10</sup> Фролова Н. А. Реферирование и аннотирование текстов по специальности (на материале немецкого языка): учебное пособие. Волгоград: ВолгГТУ, 2006, с. 83.

<sup>11</sup> Маркушевская Л. П., Цапаева Ю. А. Аннотирование и реферирование: методические рекомендации для самостоятельной работы студентов. СПб.: ГУ ИТМО, 2008, с. 9.

Դասի երկրորդ մասում լեզվական խնդիրների ուղղումը պետք է հաճախ մղել երկրորդ պլան՝ ավելի շատ հնարավորություն տալով երեխաներին ազատ արտահայտել մտքերը, չվախենալ սխալվելուց: Աշխատանքի երկրորդ մասում գերակա նպատակը պետք է լինի զուտ բնագրի, բովանդակության յուրացումը, ներքին շերտերի մեջ թափանցումն ու հերոսների բնութագրումը՝ անհրաժեշտության դեպքում վերընթերցելով բնագրի որոշ հատվածներ: Եթե հատկապես, խոսքը վերաբերում է օտար լեզվով հաղորդակցական հմտությունների զարգացմանը, ապա այս դեպքում առավել ևս կարևորվում է բանահյուսական նյութի զուգորդումը, ուսումնասիրվող լեզվի մշակույթի ու լեզվակրի աշխարհայացքի խորքերը ներթափանցումը:

Բացի այդ իմաստի ընկալմանը նպաստող, հաղորդակցական հմտությունները զարգացնող կարևորագույն գործոններից է մշտական համեմատությունը, նախորդ տեքստի ու քննարկվողի միջև ընդհանրությունների ու հակադրությունների դուրսբերումը, հերոսների համեմատությունը և այլն:

Ընթերցանության, հաղորդակցական հմտությունների բարելավմանը նպատակաուղղված դասերը կարծում ենք արդյունավետ կլինի իրականացնել <<շրջված դասավանդում>> մեթոդով՝ նախապես քննարկվող ու վերլուծվող նյութը հանձնարարելով տանը: Մեթոդը առաջին հերթին հնարավորություն կտա ժամանակ խնայել դասարանական ընթերցանության վրա: Բացի այդ, նման աշխատանքները հնարավորություն են տալիս.

- Ապահովել գործուն կապ դասանյութի ու շրջապատող աշխարհի հետ,
- Չարգացնել երեխաների հաղորդակցական հմտությունները,
- Ձևավորել ու զարգացնել համագործակցային, համեմատական, վերլուծական կարողություններ,
- Չարգացնել հետազոտական հմտություններ արդեն իսկ տարրական դպրոցից,
- Նպաստել ճիշտ սոցիալիզացիային ու պատկերացում ձևավորել հասարակական համակարգերի ու հարաբերությունների մասին:

Մասնավորեցնեքն ասվածը օրինակներով.

Տարրական դպրոցում օրինակ երեխաներին կարելի է հանձնարել կարդալ <<Շունն ու կատուն>>, տանը պատրաստվել ստեղծագործության դերային ներկյացմանը, ինչպես նաև մտածել առանձին կերպարների առավելությունների ու թերությունների մասին:

Դասարանական քննարկումները կարելի է տանել հիմնականում հետևյալ հարցադրումների ուղղությամբ.

- Համեմատել շան և կատվի բնավորությունների առանցքային գծերը,
- Ինչու կոնֆլիկտ հասունացավ,
- Ինչպես կարելի էր խուսափել կոնֆլիկտից,
- Եթե լինեի դատավոր ում կարդարացնեի,
- Որ հերոսին բնավորության ինչ գիծ է պակասում, որը կա իմ մոտ ու որի շնորհիվ ինքս կխուսափեի նմանատիպ իրավիճակից:

Կարծում ենք նմանատիպ աշխատանքները ավելի տպավորիչ ու խորքային կարող են դառնալ գործուն միջառարկայական կապեր ստեղծելու շնորհիվ: Մասնավորապես, կարելի է միջառարկայական կապես ստեղծել <<Պատմություն>>, <<Գրականություն>>, <<Երգ>>, <<Կերպարվեստ>>, <<Մաթեմատիկա>> և այլ առարկաների հետ՝ մեծացնելով դասի հետաքրքրությունն ու արդյունավետությունը: Առհասարակ ախտաբանի հաղորդակցական հմտությունները միայն մեկ առարկայի ուսուցման ընթացքում ձևավորվող հմտություններ չեն: Այդպիսի հմտությունները ձևավորվում են նաև բնագիտա-մաթեմատիկական առարկաների դասավանդման ընթացքում: Տարրական դպրոցում և միջին դպրոցի ստորին շեմին հաճախ հանձնարարվում են երեխաների վերապատմել խնդիրը, նմանատիպը հորինել և այլն: Սրանք, անկասկած հանձնարարություններ են, որ մեծապես նպաստում է խոսքային հմտությունների կատարելագործմանը:

Լեզուն ոչ միայն հաղորդակցման, այլև մտածողության բարձրագույն միջոց է: Լեզվի ուսուցման ընթացքում երեխայի մոտ պետք է ձևավորվեն քննադատական մտածողություն և վերլուծելու հմտություն: Լեզվի ուսումնառությունը ամուր հիմք է ստեղծում այլ առարկաներ ուսումնասիրելու, վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով հաղորդելու համար:

Մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերը հնարավոր է գործադրել անդրադարձի ու նախորդ տարիներին թեմայի մասին ունեցած գիտելիքների վերհանման միջոցով: Այս առումով հրաշալի հնարավորություն է տալիս ԳՈԲՍ մեթոդը, որի շրջանակներում երեխան հնարավորություն է ստանում ինքնասանդղադարձ կատարել ու փորձի հիշել թեմայի մասին ունեցած նախնական գիտելիքները և փորձառությունը:

Մյուս եղանակը այլ առարկաների շրջանակներում ձեռք բերած հմտությունների ու գիտելիքների բանավոր փոխանցումն է, ինչի շնորհիվ բարելավվում են նաև լեզվական, հաղորդակցական հմտությունները, սեփական ուժերի նկատմամբ հավատը: Բացի նշվածներից կարելի է կիրառել նաև այդ հմտությունների կիրառում, որը ուսուցման գործընթացը կդարձնի հանելի ու արդյունավետ:

Եթե ընթացիկ ծրագրային դասանյութն ունի աշխարհագրության, հայրենագիտության, պատմության, երաժշտության, արվեստի մյուս բնագավառների հետ աղերսներ, ապա նյութի դասավանդման ընթացքում ուսուցիչն իր ուսուցման զինանոցում պիտի ամբարի ու ժամանակին օգտագործի միջառարկայական ինտեգրման հնարավորությունները՝ ուսուցման ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների ճիշտ և տեղին գործադրմամբ՝ միշտ շեշտը դնելով գործնականության և ակտիվության սկզբունքի վրա: Կարելի է օրինակ բնության պահպանության մասին թեման միանգամից ուսուցանել նախագծային եղանակով՝ բոլոր առարկաների շրջանակներում անդրադարձ կատարելով միևնույն թեմային: Օրինակ ռուսերենի դասին թեմայի քննարկումը տանել ներքոբերյալ աղյուսակի ուղենիշներով:

<i>Ինչ տեսա</i>	<i>Ինչ լսեցի</i>
<i>Ինչ զգացի</i>	<i>Նոր վերնագիր</i>

Նյութի մատուցման հաջորդ փուլում կերպարվեստի ուսուցիչը հանձնարարում է տեսածը, լսածն ու զգացածը գույների միջոցով հաճնել թղթին: Այսպես, ինտեգրման մեթոդով կերպարվեստի հետ միջառարկայական կապ հաստատելով՝ նպաստում ենք սովորողների կողմից գրական երկի նյութի տեսանելի զգայական ընկալմանը. աշակերտը կարդում է, այն վերածում նկարի, ընտրում բնագրից բխող գույներ, ավելացնում ստեղծագործական ինքնուրույն երանգներ, բանավոր խոսքով հիմնավորում նկարն ու բնագիրը, ապա բացատրում իր ստեղծագործությունը:

*Մայթեմատիկայի* դասընթացի շրջանակներում կարելի է չափումներ իրականացնել, համեմատություններ անել, փորձել թեմայի շրջանակներում խնդիրներ կազմել ու լուծել:

Այսպիսով, ինչպես կրթական ցանկացած գործընթաց, այնպես էլ հաղորդակցությունը և առավել ևս հաղորդակցությունը, պետք է կազմակերպել առավելագույնս մասնակցային և շարժուն: Ինքը կրթությունը շարժուն գործընթաց է և չի կարող երեխան լինել լսողի, կողքից դիտողի դերում ու ըմբռնել պրոցեսը, ընկալել գիտելիքը:

Ուստի, հաղորդակցության բարելավմանը նպատակաուղղված վարժություններն ու դասերը պետք է լինեն մաքսիմալ հետաքրքիր, երբեմն դուրս դասասենյակային ֆորմատից: Նման դասերի անցկացման հետաքրքիր տարբերակ է բնության գրկում ընթերցանությունն ու դասի բեմադրումը:

Առհասարակ թատերական ներկայացումներն ու բեմականացումները բավականին հետաքրքիր ու արդյունավետ փորձառություն են և ճիշտ կազմակերպելու ու իրականացնելու համար կարևոր է, որ աշակերտը լինի մաքսիմալ ազատ, թե իր մտքերն ու էմոցիաներն արտահայտելու, թե դիմախաղի ու ոչ վերբալ հաղորդակցության մյուս ֆենոմենների արտահայտման համար:

Ինչպիսին էլ լինի հաղորդակցության բարելավմանն ուղղված դասը, ինչ ֆորմատով էլ որ այն իրականացվի, կարևոր է, որ ամփոփման փուլը մղի սովորողին գալ եզրահանգումների, սեփական մտքերն արտահայտել այս կամ այն կերպարի մասին, համեմատել նրան նախորդիվ ուսումնասիրված այլ կերպարների հետ, գտնել տարբերություններ և նմանություններ, վեր հանել դրական ու նմանակման արժանի արժեքները՝ այսպիսով նպաստելով ոչ միայն արդյունավետ, այլ նաև տրամաբանված հաղորդակցության զարգացմանը:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յուրաքանչյուր մշակույթ իր զարգացման ընթացքում ստեղծում է տարբեր նշանային համակարգեր, որոնք բնորոշ են այդ մշակույթը, արժեհամակարգը կրողներին: Նշանների ստեղծումը գուտ մարդկային առանձնահատկություն է:
2. Միջմշակութային, միջէթնիկ հաղորդակցության հաջողության գրավականը ոչ միայն լեզվի նպակադրված սովորելու գործընթացն է, այլ նաև վերջինիս մշակույթի մասին ֆոնային գիտելիքի ձեռքբերումը: Ուստի հաջող հաղորդակցության համար անհրաժեշտ է ոչ միայն գուտ բառային նշանային համակարգի ուսուցում, այլ ավելի հիմնային նյութի՝ տվյալ ժողովրդի բանահյուսության ու ավանդույթների ուսուցում:
3. Ընթերցանության վերահսկողության օբյեկտը պետք է լինի տեքստի բովանդակության ըմբռնումը, այլ ոչ թե նրա լեզվական նյութը:
4. Խոսքի բոլոր տեսակների համար փոխկապակցված ուսուցման իրագործելիության և արդյունավետության վերաբերյալ մեթոդական դիրքորոշումը ներառում է խոսքային այլ հմտությունների զարգացմանը գուգահեռ ընթերցանության հմտությունների՝ և ամենից առաջ խոսելու ուսուցում: Միաժամանակ պետք է պահպանվի հնչունական և բառագիտական-քերականական նյութի միասնությունը՝ որպես սովորողի խոսքային ստեղծագործության հիմք:
5. Լեզուն ոչ միայն գուտ լեզվական գիտելիքի, այլև լեզվամտածողության համար է պատասխանատու: Միջառարկայական կապերով դասավանդումը կարծում ենք հրաշալի հնարավորություն է և՛ մայրենի, և՛ օտար լեզուների՝ պետական նոր չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներին հասնելու: Նպաստելու սեփական անձի, իրեն շրջապատող մարդկանց ու երևույթների նկատմամբ հարգանքի, համագործակցային, ընկերական հարաբերությունների ձևավորմանը և, իհարկե, հաղորդակցական հմտությունների բարելավմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Տերյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, Եր., 1972:
2. Ахманова О.С., Словарь лингвистических терминов, М., 1969.
3. Гумбольдт В. О влиянии различного характера языков на литературу и духовное развитие. Избранные труды по языкознанию. М., 1984.
4. Грушевицкая Т. Г., Попков В. Д., Садохин А. П. Основы межкультурной коммуникации, М., 2003.
5. Маркушевская Л. П., Цапаева Ю. А. Аннотирование и реферирование: методические рекомендации для самостоятельной работы студентов. СПб.: ГУ ИТМО, 2008
6. Томахин Г.Д., Фоновые знания как основной предмет лингвострановедения // ИЯШ. 1980, № 4.
7. Фролова Н. А. Реферирование и аннотирование текстов по специальности (на материале немецкого языка): учебное пособие. Волгоград: ВолгГТУ, 2006,
8. Tylor E.V Anthropology. Ann Arbor: The University of Michigan Press, 1960, p. 28.